



Հարգելի ընթերցողներ,

Ձեզ ենք ներկայացնում Լրատվամիջոցների գերազանցության բալթյան կենտրոնի պատրաստած էլեկտրոնային տեղեկատու, որն աջակցում է Արևելյան գործընկերության երկրների անկախ լրատվամիջոցներին: Այստեղ ամփոփել ենք դրամաշնորհային հայտարարություններ և Հայաստանի, Ադրբեջանի, Բելոռուսի, Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի լրատվամիջոցների ֆինանսավորման հնարավորությունների մասին այլ նորություններ:

Մեր ցանկությունն է, որպեսզի տեղեկատուն ձեզ համար հասանելի դարձնի դոնորների ֆինանսավորումը, կրճատի տեղեկատվություն փնտրելու ձեր ժամանակը և ֆոնդահայթայթումը դարձնի առավել արդյունավետ: «Ֆինանսավորման նորություններ» բաժնում կարող եք ծանոթանալ դրամաշնորհային ամենաթարմ հայտարարություններին:

Կենտրոնը հուսով է, որ տեղեկատուն իր ներդրումը կունենա դոնորների ու Արևելյան գործընկերության երկրների անկախ լրատվամիջոցների միջև երկխոսության գործում և տարածաշրջանի մեղիա դաշտը կդարձնի առավել բազմազան:

Տեղեկատուի հետ կապված առաջարկներով, դիտարկումներով և տպավորություններով կարող եք կիսվել մեզ հետ՝ գրելով info@baltic.media հասցեով:

Հարգանքով,

Funds4Media տեղեկատուի հեղինակներ

1. European Journalism Institute-ի ծրագիրը լրագրողների համար
2. Fund for Investigative Journalism-ի դրամաշնորհները հետաքննական լրագրության համար
3. Աջակցություն արդեն պատրաստ պատմությունների օգտագործմամբ նյութերի ու հաղորդումների շարք արտադրելու համար
4. Civil Society Leadership Awards մագիստրոսական կրթաթոշակները Եվրոպայում և ԱՄՆ-ում սովորելու համար
5. Getty-ի դրամաշնորհները ֆոտոլրագրողների համար
6. Դրամաշնորհներ բնապահպանական լրագրողների համար
7. Դասընթաց Չեռնոգորիայում թվային հաղորդակցության մասնագետների համար
8. Միջազգային սեմինար լրագրողների համար
9. Պուլիցերյան կենտրոնը ընդունում է տվյալների լրագրության նախագծերի հայտեր
10. Պրակտիկայի հնարավորություն Digital Communication Network-ում
11. Filmmakers Without Borders-ի միջազգային դրամաշնորհները
12. Վացլավ Հավելի անվան մրցանակը Արևելյան Գործընկերության երկրների լրագրողների համար
13. Եվրոպական նախաձեռնությունների երիտասարդական ֆորումը Նանտում, Ֆրանսիա
14. Ռորի Փեքի անվան միջազգային մրցանակը վիդեո լրագրողների համար
15. Logan Nonfiction միջազգային կրթաթոշակներ
16. Սեմինար Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երիտասարդ լրագրողների համար M100 Young European Journalists Workshop 2019
17. Հետաքննական լրագրության ամառային դպրոցին մասնակցության կրթաթոշակներ
18. Open Eurasia-ի միջազգային ստեղծագործական մրցույթը
19. Լրագրողական մրցույթ՝ խոշտանգումներից գերծ մնալու իրավունքի թեմայով

1. European Journalism Institute-ի ծրագիրը լրագրողների համար

2017թ-ից Fund for American Studies-ը և Media Project-ը համագործակցում են և վերսկսել են European Journalism Institute-ի ծրագիրը: Վերջինս Պրահայում կազմակերպվող ծրագրի միջոցով լրագրողներին և ուսանողներին հնարավորություն է ընձեռում խորացնել իրենց գիտելիքը լրագրության և քաղաքագիտության ոլորտներում:

Եվրոպայից, Մերձավոր Արևելքից, Կենտրոնական Ասիայից և Կենտրոնական ու Հարավային Ամերիկայից ժամանած մասնակիցները կարող են հետազոտել լրագրողական էթիկային, կրոնական թեմաների լուսաբանմանը, հակամարտություններին և բիզնես լրագրությանն առնչվող հիմնարար հարցեր:

Մանրամասները՝ <https://tfas.org/programs/international-programs/european-journalism-institute/how-to-apply>

Վերջնաժամկետ՝ 13 մայիսի, 2019թ

2. Fund for Investigative Journalism-ի դրամաշնորհները հետաքննական լրագրության համար

Դրամաշնորհի առավելագույն գումարը 10 000 ԱՄՆ դոլար է և նախատեսված է ճանապարհաձախսի, նյութեր հավաքելու և սարքավորումներ ձեռք բերելու համար: Դրամաշնորհի շրջանակներում հիմնադրամը նաև կարող է տրամադրել փոքր կրթաթոշակներ: Դրամաշնորհները տրամադրվում են տարվա ընթացքում 3-4 անգամ:

Մանրամասները՝ <http://fij.org/apply-for-a-grant>

Վերջնաժամկետ՝ 13 մայիսի, 2019թ

3. Աջակցություն արդեն պատրաստ պատմությունների օգտագործմամբ նյութերի ու հաղորդումների շարք արտադրելու համար

OPEN Media Hub-ն ընդունում է դիմումներ հեռուստատեսային և առցանց վիդեոլրագրողներից: Մրցույթում հաղթելու դեպքում նրանք կարող են օգտագործել OPEN Media Hub հարթակում տեղադրված բովանդակությունը: Դրամաշնորհի առավելագույն չափը՝ 7 000 եվրո:

OPEN Media Hub-ը կաջակցի հետևյալ աշխատանքների համար՝

- արդեն հրապարակված պատմությունների թարգմանություն ձեր նախընտրած լեզվով,
- յուրահատուկ գրաֆիկայի պատրաստում,
- ստուդիայի օգտագործում,
- յուրօրինակ երաժշտություն,
- խմբագրում / մոնտաժ / ռենդերինգ,
- աշխատանք առաջատար և նկարահանող խմբերում,
- շարքի տեսքով առցանց հրապարակման կամ հեռարձակման համար անհրաժեշտ ցանկացած աշխատանք:

Մանրամասները՝ <https://openmediahub.com/ru/2018/07/30/ger-support-for-usage-of-produced-stories-as-series-or-strands>

Վերջնաժամկետը՝ 14 մայիսի, 2019թ

4. Civil Society Leadership Awards մագիստրոսական կրթաթոշակները Եվրոպայում և ԱՄՆ-ում սովորելու համար

Civil Society Leadership Awards կրթաթոշակային ծրագիրը նախատեսված է բարձր առաջադիմություն, մասնագիտական գերազանց հմտություններ և իրենց երկրում սոցիալական փոփոխությունների ձգտող թեկնածուների համար: Դիմորդները պետք է լինեն այնպիսի երկրներից, որտեղ կառավարման ու սոցիալական զարգացման հարցերում առկա է ժողովրդավարության ցածր մակարդակ:

Մագիստրոսական ծրագրերը կարելի է իրականացնել Չինաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Հնդկաստանի, Լատվիայի, Հոլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի և ԱՄՆ-ի համալսարաններից մեկում:

Հիմնադրամը հոգում է կրթության, կեցության, սննդի և տրանսպորտային ծախսեր՝ մասնակցելու ամառային դպրոցի և գիտաժողովների, ինչպես նաև առողջապահական ապահովագրություն և մասնագիտական զարգացման համար այլ ծախսեր:

Մանրամասները՝ <https://www.opensocietyfoundations.org/grants/civil-society-leadership-award>

Վերջնաժամկետը՝ 15 մայիսի, 2019թ

5. Getty-ի դրամաշնորհները ֆոտոլրագրողների համար

Դիմել կարող են այն ֆոտոլրագրողները, ովքեր աշխատում են լրագրության համար կարևոր նախագծերում կամ նպատակ ունեն զարգացնել իրենց սեփական վարպետությունը:

Մրցույթի հովանավորն է Grants for Editorial Photography — Getty Images-ը (<http://www.gettyimages.com>): Մրցույթը աջակցում է շնորհալի լուսանկարիչներին, սոցիալական, քաղաքական և մշակութային նախագծերի հեղինակներին:

Տրամադրվում է երեք կրթաթոշակ՝ յուրաքանչյուրը 15 000 ԱՄՆ դոլար: Գումարը կարելի է ծախսել տարբեր նպատակներով, ինչպես օրինակ ճանապարհորդությունը և սարքավորումների ձեռքբերումը:

Հայտին հարկավոր է կցել ծրագրի նկարագրությունը (անգլերեն, մինչև 500 բառ), հակիրճ ինքնակենսագրություն և 20-25 լուսանկար:

Մանրամասները՝ http://wherewestand.gettyimages.com/gi_grants/grants-for-editorial-photography/#how_to_apply

Վերջնաժամկետը՝ 15 մայիսի, 2019թ

6. Դրամաշնորհներ բնապահպանական լրագրողների համար

Բնապահպանական լրագրողների միությունն առաջարկում է դրամաշնորհներ լրագրողական նախագծերի համար: Ամբողջ աշխարհի լրագրողները կարող են դիմել 5 000 ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհ ստանալու համար: Առաջարկվող նախագծերը պետք է վերաբերեն բիոբազմազանության և դրա հետ կապված խնդիրներին: Միջոցները կարող են օգտագործվել լրագրողների աշխատանքը վարձատրելու, ճանապարհածախսի, մուլտիմեդիա նյութեր պատրաստելու և այլնի համար: Բնապահպանական լրագրողների միությանը չանդամակցող լրագրողները պետք է վճարեն 40 ԱՄՆ դոլար դիմումները ներկայացնելիս:

Մանրամասները՝ <https://www.sej.org/initiatives/fund-for-environmental-journalism>

Վերջնաժամկետը՝ 15 մայիսի, 2019թ

7. Դասընթաց Չեռնոգորիայում թվային հաղորդակցության մասնագետների համար

Digital Communication Network-ը և World Learning-ը թվային հաղորդակցության մասնագետներին հրավիրում են «Թվային հեղինակությունները (ինֆլուենսըրներ) գործողության մեջ» դասընթացին, որը տեղի կունենա հունիսի 18-19-ը Բուդվայում, Չեռնոգորիա: Աշխատանքային լեզուն անգլերենն է: Հատուկ ուշադրություն կդարձվի սոցիալական ձեռներեցությանը: Թեկնածուները պետք է լինեն թվային միջավայրի մասնագետներ, օրինակ, վերլուծաբաններ, ձեռներեցներ, լրագրողներ, շուկայագետներ: Կազմակերպիչները հոգում են ճանապարհածախսը և կեցության ծախսերը: Մասնակցելու համար հարկավոր է լրացնել հարցաթերթ:

Մանրամասները՝ <https://web.facebook.com/events/1550496911752571>

Վերջնաժամկետը՝ 16 մայիսի, 2019թ

8. Միջազգային սեմինար լրագրողների համար

Արևելյան Եվրոպայի համագործակցության և զարգացման ցանցը կազմակերպում է սեմինար «Քննադատական լրագրությունը թվային դարաշրջանում. օբյեկտիվ տեղեկատվության հասանելիությունը երիտասարդներին» թեմայով, որը տեղի կունենա հուլիսի 2-ից 7-ը Վրաստանում: Կարող են դիմել 16-35 տարեկան լրագրողները:

Սեմինարի օրակարգում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են թվային տեղեկատվության իրավունքները և նոր առցանց գործիքները, որոնք նպաստում են ցանցում հանրության հետ կապերի բարելավմանը: Կլինեն տեսական սեսիաներ, խմբային աշխատանք, քննարկումներ:

Կազմակերպիչները մասնակիցներին կտրամադրեն ուսումնական նյութեր և կհոգան տրանսպորտային ու կեցության ծախսերը:

Մանրամասները՝ <https://www.cdnee.org/open-call-for-participants-international-seminar-critical-journalism-in-digital-era-youths-access-to-non-biased-information>

Վերջնաժամկետը՝ 19 մայիսի, 2019թ

9. Պուլիցերյան կենտրոնը ընդունում է տվյալների լրագրության նախագծերի հայտեր

Ճգնաժամային իրավիճակների լուսաբանման պուլիցերյան կենտրոնը կֆինանսավորի նախագծեր, որոնց հիմքում տվյալների լրագրությունն է սեփականության իրավունքի և հողի իրավունքի ոլորտներում:

Կենտրոնն առանձնապես հետաքրքրված է այնպիսի նյութերով, որոնք կօգտագործեն արբանյակային լուսանկարներ, 360 աստիճանով վիդեոներ, դրոնների նկարահանումներ, սենսորային տվյալներ, վիզուալ տվյալներ, ինտերակտիվ քարտեզներ և գրաֆիկներ:

Նախագծերի հնարավոր թեմաներ կարող են լինել՝ հողօգտագործումը, բնիկ ժողովուրդների՝ հողերի նկատմամբ ունեցած իրավունքները, հողերին առնչվող գործարքների և պայմանագրերի թափանցիկությունը: Կընտրվի 3-5 նախագիծ, որոնց հեղինակները կստանան դրամաշնորհներ:

Մանրամասները՝ <http://pulitzercenter.org/blog/open-call-proposals-2019-data-journalism-and-property-rights-grants>

Վերջնաժամկետը՝ 31 մայիսի, 2019թ

10. Պրակտիկայի հնարավորությունն Digital Communication Network-ում


Ծրագրի ընթացքում հաղորդակցության մասնագետները կարող են պրակտիկա անցնել ԱՄՆ-ում գործող ոչ-առևտրային, ոչ-պետական և հասարակական կազմակերպություններում, լրատվամիջոցներում, ինչպես նաև համալսարաններում:

Ծրագիրը մշակել են տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետները՝ նպատակ ունենալով միավորել իրենց և հասարակական, քաղաքացիական և ոչ-առևտրային կազմակերպությունների հնարավորությունները՝ ընդհանուր խնդիրներ լուծելու և այդ մասին տեղեկատվությունը տարածելու համար:

Կազմակերպիչները կհոգան բոլոր ծախսերը: Մասնակցության համար հարկավոր է ներկայացնել աշխատանքային փորձը մեդիա կազմակերպությունում, հաղորդակցության ընկերությունում, ՀԿ-ում:

Մանրամասները՝ <https://worldlearninginnovanddev.wufoo.com/forms/r1kcrxvq0inpk6k>

Վերջնաժամկետը՝ 1 հունիսի, 2019թ



11. Filmmakers Without Borders-ի միջազգային դրամաշնորհները

Վավերագրական ֆիլմերի սկսնակ և փորձառու հեղինակները կարող են դիմել դրամաշնորհներ ստանալու համար:

Filmmakers Without Borders-ն առաջարկում է դրամաշնորհներ վավերագրական, խաղարկային և փորձարարական, ինչպես նաև նոր մեդիաներին առնչվող նախագծերի վրա աշխատելու համար: Նախագծերը կարող են լինել իրականացման տարբեր փուլերում: Դրամաշնորհների գումարը կարող է լինել 100-ից 5,000 ԱՄՆ դոլար և ծախսվել նախաարտադրական, արտադրական, հետարտադրական աշխատանքների, ինչպես նաև փառատոների մասնակցելու համար:

Մանրամասները՝ <http://filmmakerswithoutborders.org/grants>

Վերջնաժամկետը՝ 1 հունիսի, 2019թ


12. Վացլավ Հավելի անվան մրցանակը Արևելյան Գործընկերության երկրների լրագրողների համար

Մրցանակի նպատակն է աջակցել այն երկրների հեռանկարային լրագրողներին, որոնք բախվում են լրատվամիջոցների անկախության խնդիրների:

Կարող են դիմել Հայաստանի, Բելոռուսի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի և Ուկրաինայի լրագրողները: Ընտրված մրցանակակիրները վեց ամիս շարունակ (2019թ-ի նոյեմբերի 18-ից 2020թ-ի հունիսի 26-ը) պրակտիկա կանցնեն Ազատ Եվրոպա ռադիոյի/Ազատություն ռադիոկայան կենտրոնական գրասենյակի խմբագրությունում (Պրահա)՝ համագործակցելով փարձառու լրագրողների հետ:

Մանրամասները՝ <https://pressroom.rferl.org/call-for-applications-vaclav-havel-journalism-fellowship-2019-2020>

Վերջնաժամկետը՝ 2 հուլիսի, 2019թ



13. Եվրոպական նախաձեռնությունների երիտասարդական ֆորումը Նանտում, Ֆրանսիա

Nantes Creative Generations-ն առաջարկում է Եվրոպայի քաղաքացիների միջև հարաբերությունների կայացման, ստեղծագործական համագործակցության և շրջակա միջավայրի պահպանության ֆորումին, որը տեղի կունենա հոկտեմբերի 23-ից 26-ը Ֆրանսիայում:

Չորս օրերի ընթացքում մասնակիցները (18-30 տարեկան) կարող են ներկայացնել իրենց նախագիծը կամ նախաձեռնությունը, ինչպես նաև աշխատել տեղական (եվրոպական մակարդակով) նախագծերի վրա: Աշխատանքային լեզուն անգլերենն է: Կազմակերպիչները կհոգան բոլոր ծախսերը:

Մանրամասները՝ <http://www.nantescreativegenerations.eu/en/forum/calls-for-application>

Վերջնաժամկետը՝ 3 հունիսի, 2019թ

14. Ռորի Փեքի անվան միջազգային մրցանակը վիդեո լրագրողների համար

Դիմել կարող են միջազգային նորություններ և իրադարձություններ լուսաբանող վիդեո լրագրողները:

Ռորի Փեքի անվան հիմնադրամը հիմնադրվել է 1995թ-ին, վիդեոլրագրող Ռորի Փեքի՝ Մոսկվայում նկարահանումների ժամանակ սպանությունից երկու տարի անց: Նրա անունով մրցանակը շնորհվում է արտահաստիքային լրագրողներին երեք նոմինացիայով՝ նորություններ, սյուժեներ, Sony Professional Impact Award-ի մրցանակ:

Առաջին հերթին հաշվի է առնվում օպերատորական աշխատանքի որակը, լրագրողի աշխատանքը, նյութի նախաձեռնող և հավակնոտ բնույթը:

Մրցույթին ներկայացվող նյութերը պետք է հրապարակված կամ հետարձակված լինեն 2018թ-ի հուլիսի 1-ից մինչև 2019թ-ի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

Այլ լեզուներով նյութերի համար հարկավոր է ներկայացնել անգլերեն մանրամասն նկարագրություն և գլխագրեր:

Մանրամասները՝ <https://rorypecktrust.org/Awards/2019/Open-for-Entries>

Վերջնաժամկետը՝ 5 հունիսի, 2019թ

15. Logan Nonfiction միջազգային կրթաթոշակներ

Կրթաթոշակներին կարող են դիմել ծավալուն վավերագրական նախագծերի վրա աշխատող լրագրողները, վավերագրական ֆիլմերի հեղինակները, լուսանկարիչները և մուլտիմեդիա նյութեր արտադրողները: Կրթաթոշակային ծրագիրը կանցկացվի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Քերիի անվան ինստիտուտում, Նյու Յորք:

Ծրագրի նպատակն է ժողովրդավարության խթանումը՝ անկախ լրագրողական հետաքննություններին աջակցելու միջոցով: Դիմորդները պետք է ներկայացնեն հայտ և նախագծի գաղափարը, որը պետք է լինի սոցիալական նշանակություն ունեցող թեմայով՝ քաղաքականություն, առողջապահություն, բնապահպանություն, մարդու իրավունքների պաշտպանություն: Կազմակերպիչները կհոգան կեցության և սննդի ծախսերը, ինչպես նաև կտրամադրեն խորհրդատվություն 10 շաբաթ ժամկետով:

Մանրամասները՝ <https://careyinstitute.org/programs/nonfiction/nonfiction-fellowship/application-guidelines>

Վերջնաժամկետ՝ 15 հունիսի, 2019թ

16. Սեմինար Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երիտասարդ լրագրողների համար M100 Young European Journalists Workshop 2019

Դիմել կարող են Արևելյան գործընկերության երկրների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Բելոռուս, Սոլովակ, Ուկրաինա) և Ռուսաստանի 18-26 տարեկան լրագրողները:

Գերմանիայի արտաքին գործերի նախարարության և Deutsche Welle-ի աջակցությամբ կազմակերպած M100 սեմինարը տեղի կունենա սեպտեմբերի 9-ից 18-ը Պոտսդամում և Բեռլինում, Գերմանիա: Թեման է՝ «Ընթերցանությունը թվային աշխարհում. նորարարական լրագրություն»:

Օրակարգում կլինեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ: Հետաքրքրված լրագրողները պետք է ներկայացնեն իրենց նախագծերի գաղափարը:

Մանրամասները՝ <http://www.m100potsdam.org/en/m100/m100-young-european-journalists/application>

Վերջնաժամկետը՝ 16 հունիսի, 2019թ

17. Հետաքննական լրագրության ամառային դպրոցին մասնակցության կրթաթոշակներ

Ղիմել կարող են Արևելյան Գործընկերության և Բալթյան երկրների լրագրողները: Ամառային դպրոցը կանցկացնի Մեդիա հետաքննությունների կենտրոնը օգոստոսի 14-17 Ռիգայում, Լատվիա:

Դպրոցի թեմաներն են՝ խմբագրություն, ռադիո և փողքասթինգ, վիզուալիզացիա, ինտերնետում տեղեկատվության փնտրում, կազմակերպված հանցագործությունների և կոռուպցիայի թեմաների լուսաբանում և այլն: Դպրոցը կվարի լրագրող, Cambridge Analytical-ի գործունեությունը հետաքննող Քերոլ Քադվալադըրը:

Ուսուցման ծրագրի վարձը 350 եվրո է: Արևելյան Գործընկերության և Բալթյան երկրների լրագրողները կարող են ղիմել կրթաթոշակների համար:

Մանրամասները՝ <https://www.media-summerschool.lv>


Վերջնաժամկետը՝ 21 հունիսի, 2019թ

18. Open Eurasia-ի միջազգային ստեղծագործական մրցույթը

Open Eurasia-ի այս տարեկան մրցույթը նախատեսված է գրողների, պոետների, թարգմանիչների, լրագրողների և իլյուստրատորների համար: Մրցանակային ֆոնդը կազմում է 31,000 ԱՄՆ դոլար: Մրցույթը հաղթողները գիրք հրատարակելու և 2020թ-ի Open Eurasian Book Forum-ում և Literature Festival-ում, ինչպես նաև Եվրասիայի այլ հարթակներում ներկայացնելու համար գումար ստանալ: Հայտերն ընդունվում են անոցանց, ռուսերեն, անգլերեն, ղազախերեն, ուզբեկերեն, տաջիկերեն, բելոռուսերեն՝ կախված նոմինացիայից:

Մանրամասները՝ <http://www.awardslondon.com/uslovia>

Վերջնաժամկետը՝ 15 սեպտեմբերի, 2019թ



19. Լրագրողական մրցույթ՝ խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի թեմայով

Աշխարհագրությունը՝ Հայաստան

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հայտարարում է խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու բացարձակ իրավունքի իրացման վիճակի վերաբերյալ լրագրողական նյութերի մրցույթ: Լրագրողական նյութերը կարող են լինել հետևյալ ձևաչափերով՝ տպագիր, ռադիո, հեռուստատեսային, անոթանոց և մուլտիմեդիա: Դրանք պետք է պատրաստված և հրատարակված, հեռարձակված կամ համացանցում հրապարակված լինեն 2018 թ. նոյեմբերի 15-ից 2019 թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

Մանրամասները՝ https://drive.google.com/file/d/1PUh7sbWp5F3_8UTPsL2bxEek1Cp7DfWZ/view

Վերջնաժամկետը՝ 31 օգոստոսի, 2019թ



© Մեդիա գերազանցության բալթյան կենտրոն, 2019թ.

Տեղեկագիրը պատրաստվել է անվճար տարածելու համար:

Պատրաստել են՝ Ալինա Ռուդինան, Արշալույս Մուրադյանը, Դիանա Խոդուլինան, Եվգենիա Օլիյնիկը, Կատրինա Տետերե-Ֆրոլովան, Մարտինշ Մուրնիեկսը, Նախիա Ալիսան, Թամար Խորրալաձեն:

Հայերեն թարգմանությունը՝ Արշալույս Մուրադյան:

Մեդիա գերազանցության բալթյան կենտրոնը պատասխանատվություն չի կրում թարգմանության ճշգրտության համար: Դոնորների և դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկատվությունը սպառիչ չէ. տեղեկագիրը պատրաստողները իրավունք են վերապահել ընտրել առավել նշանակալից հնարավորությունները: Կենտրոնը խորհուրդ է տալիս դիմումները պատրաստելիս, դոնորների հետ հաղորդակցվելիս և տեղեկագրում ներկայացված նյութերը օգտագործելիս առաջնորդվել միայն սկզբնական/առաջնային աղբյուրներով:

Տեղեկագրում օգտագործվել են նյութեր հետևյալ աղբյուրներից.

- tfas.org
- fij.org
- openmediahub.com
- opensocietyfoundations.org
- wherewestand.gettyimages.com
- sej.org
- facebook.com
- cdnee.org
- pulitzercenter.org
- worldlearninginnovanddev.wufoo.com
- filmmakerswithoutborders.org
- pressroom.rferl.org
- nantescreativegenerations.eu
- rorypecktrust.org
- careyinstitute.org
- m100potsdam.org
- media-summerhschool.lv
- awardslondon.com
- drive.google.com

